

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ETHNOGRAPHY
ЭТНОГРАФИЯ

ՀՏԴ՝ 391

DOI: 10.52971/18294316-2024.27.2-187

ՄԵՌԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ ՀԱԳՈՒՍՏԻ ՄԵՋ.
ԱՐԳԵԼՔՆԵՐ ԵՎ ՇՐՋԱՆՑՈՒՄՆԵՐ

Սվետլանա Հ. Պողոսյան

Հայաստանի ազգագրության թանգարան,
ԳՄԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հոդվածը նվիրված է հայ ավանդական հասարակությունում մշակույթը կրողի արտաքին կերպարի, հագուստ-կապուստի մեջ թույլատրելիի և անթույլատրելիի սահմանների, իդեալական և իրական նորմերի, առօրյա և լիմինալ /սահմանային/ իրավիճակների ազգաբնական դիտարկմանը: Դիտարկված են նաև ժամանակակից հասարակության տարբեր շերտերի հագուստում նկատվող փոփոխություններն ու միտումները: Մեթոդներ և նյութեր. Հոդվածը շարադրելիս օգտագործվել են դիտարկվող թեմայի վերաբերյալ առկա գրավոր և դաշտային ազգագրական նյութեր: Ուսումնասիրությունն իրականացնելիս կիրառվել են պատմահամեմատական և վերլուծության, որակական հետազոտության (ազգագրական դիտարկում, հարցազրույց, ֆոկլոր խմբային հարցում, իրապատում) մեթոդները: Վերլուծություն. Կանանց հագուստը դիտարկելիս նկատելի է, որ կինը, նրա վարքը գտնվել են հանրության հսկողության ներքո, և վերջինս թույլ չի տվել որևէ շեղում ընդհանուր կանոնից և թաքուի շրջանցման որևէ փորձ: Ավանդության հասարակությունում տարազը որոշակիորեն կանոնակարգված և սահմանված բնույթ է ունեցել: Կին թե աղջիկ, հնազանդելով հասարակական կարծիքի պահանջներին, քննադատվելուց և ծաղրվելուց խուսափելու համար արել են այն, ինչ «պահանջում էր աղաթը», և դա նպաստել է տարազի ավանդական կառուցվածքի և ձևերի կայունացմանը: Ավանդական հասարակությունում սակայն եղել են նաև ընդունված նորմերի շրջանցման եզակի դեպքեր: Արդյունքներ. Ուսումնասիրությունից պարզվում է, որ հագուստի փոխանակումը կնոջ և տղամարդու տեղի, դիրքի և սկզբունքների փոխանակություն է: Միայն լիմինալ իրավիճակներում համայնքը կթույլատրեր շեղում

ընդհանուր և կանոնակարգված դրվածքից, տվյալ դեպքում՝ այդ սեռին հատուկ տարազի կենցաղավարվող համալիրից:

Բանալի բառեր՝ կարելի է- չի կարելի, կին-տղամարդ, հագուստ, կերպարանափոխում, թաքուններ, հանրույթ, շեղում, լիմինալ իրավիճակ, ավանդական հասարակություն:

Ինչպես հղել՝ Պողոսյան Ս. Մեռային փոխակերպումներ հագուստի մեջ. արգելքներ և շրջանցումներ // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետզոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», Ն. 2 (27): Գյումրի: 2024: 187-195 էջեր:

DOI: 10.52971/18294316-2024.27.2-187

GENDER TRANSFORMATIONS IN CLOTHING: TABOOS AND CIRCUMVENTIONS

Svetlana H. Poghosyan

Armenian Ethnography Museum

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The article is dedicated to the ethnological observation of the external image of the person carrying the culture in traditional Armenian society, the limits of what is permissible and what is not permissible in clothing, ideal and real norms, everyday and liminal/borderline situations. The changes and trends observed in the clothes of different layers of modern society are also observed. **Methods and materials:** The existing written and field ethnographic materials on the subject under consideration were used in the preparation of the article. The methods of historical comparative and analytical research (ethnographic observation, interview, focus group survey, interview) were used in the study. **Analysis:** When considering women's clothing, it is noticeable that the woman and her behavior were under the control of society. It did not allow any deviations from the generally accepted rules and any attempt to circumvent the taboos. Both women and girls, obeying the requirements of public opinion, in order to avoid criticism and ridicule, did what "adat (custom) would require". This contributed to the stabilization of the traditional structure and forms of the national costume. However, there have been rare cases of deviation from generally accepted norms in traditional society. **Results:** The study reveals that the exchange of clothes is an exchange of place, position and principles between a woman and a man. Only in liminal situations would the society allow a deviation from the generally accepted and regulated way of life, in this case from the existing complex of national costume characteristic of a given gender.

Key words: allowed-not allowed, woman-man, clothes, transformation, taboos, society, deviation, liminal situation, traditional society.

Citation: Poghosyan S. *Gender Transformations in Clothing: Taboos and Circumventions*. // "Scientific Works" SHCAS of NAS RA. V. 2 (27). Gyumri. 187-195pp..

DOI: 10.52971/18294316-2024.27.2-187

ГЕНДЕРНЫЕ ПРЕОБРАЖЕНИЯ В ОДЕЖДЕ: ТАБУ И ОБХОД

Светлана Г. Погосян

Этнографический музей Армении,
Институт археологии и этнографии НАН, Ереван, РА

Аннотация

Введение: Статья посвящена этнологическому наблюдению внешнего образа человека-носителя культуры в традиционном армянском обществе, границ дозволенного и недозволенного в одежде, идеальных и реальных нормах, бытовых и пограничных ситуациях. Также наблюдаются изменения и тенденции, наблюдаемые в одежде разных слоев современного общества. **Методы и материалы:** При написании статьи были использованы существующие письменные и полевые этнографические материалы по рассматриваемой теме. В исследовании использовались историко-сравнительный и аналитический, качественные методы исследования (этнографическое наблюдение, интервью, фокус-группы). **Анализ:** При рассмотрении женской одежды заметно, что женщина и ее поведение находились под контролем общества. Оно не допускало никаких отклонений от общепринятых правил и попыток обойти табу. В традиционном обществе национальный костюм имел определенно регламентированный характер. Как женщины, так и девушки, подчиняясь требованиям общественного мнения, во избежание критики и насмешек, делали то, чего требовал «адат (обычай)». Это способствовало стабилизации традиционной структуры и форм национального костюма. Однако в традиционном обществе были единичные случаи отклонения от общепринятых норм. **Результаты:** В ходе исследования выявлено, что обмен одеждой – это обмен местом, позицией и принципами между женщиной и мужчиной. Только в лиминальных ситуациях общество допустило бы отклонение от общепринятого и регламентированного уклада, в данном случае от бытовавшего комплекса национального костюма, характерного для данного пола.

Ключевые слова: можно-нельзя, женщина-мужчина, одежда, преобразование, табу, общество, отклонение, лиминальная ситуация, традиционное общество.

Как цитировать: Погосян С. Гендерные преобразования в одежде: табу и обход. // "Научные труды" ИЦАИ НАН РА, Т. 2 (27), Гюмри, 2024. 187-195 сс..

DOI: 10.52971/18294316-2024.27.2-187

ՆԱԽԱԲԱՆ. Կանանց հագուստը դիտարկելիս մի միտք է առկայծում, որ կինը, նրա վարքը ավանդույթային հասարակությունում գտնվել են հանրության հսկողության ներքո, և վերջինս թույլ չի տվել որևէ շեղում ընդհանուր կանոնից և թաբուի շրջանցման որևէ փորձ: Այստեղ մարդու վարքն ու բարքը, արտաքին կերպարը, արդուզարդը, տարազը որոշակիորեն կանոնակարգված և սահմանված բնույթ են ունեցել: Կինը չէր կարող գլխաբաց լինել, չպետք է երևային նրա թևերը և սրունքները, և պետք է երևային նրա վարտիքի փողբերի ծայրերը, ամուսնացած կինը անպատճառ պիտի հյուսեր մագերթ և կրեր գոգնոց՝ որպես սեռատարիքային կարգավիճակի ցուցիչ և այլն: Նա պարտադիր կրում էր գլխաշոր, ինչպես տղամարդիկ՝ գդակ կամ գլխարկ: Հագուստի որոշակի տարրեր ուղղակիորեն ասոցացվել են տվյալ սեռի հետ. գլխաշորը, գլխի հարդարանքի մաս կազմող ճակատակալն ու զարդերը, գոգնոցը, կրծկալ սրտանոցը, երկարափեշ ներքնագգեստն ու վերնագգեստը, կարմիր վարտիքն ու գոգնոցը հանդես են եկել

որպես կանանց հագուստի պարտադիր մասեր: Մորթե կամ թաղիքե գլխարկը, ասեղնագործ գդակը, թիկնաշորը, շավվարն ու ագանեղիքն ամբողջացնող ոտքի փաթաթանսոնապանը կազմել են տղամարդկանց տարազի համալիրը: Աղջիկների համար էլ, ըստ վայելչության ընդունված նորմերի, սահմանված էին որոշ կանոններ: Աղջիկները հատուկ ուշադրություն են դարձրել մազերին, առավել ճոխացրել թելափնջերով, ծամթելով: Կրել են արծաթյա թասակներ կամ ասեղնագործ ճակատակալներ, թեթև գլխակապեր և գլխաշորեր, հագել կրծքամասի տակի կտրվածքով զգեստներ:

Հագուստի միջնադարյան կանոնները

Հայոց միջնադարյան եկեղեցական կանոններով կնոջը խիստ արգելվել է տղամարդու հագուստ կրել: «Կին ոք որպես թե պահս ինչ հարմար է փոխել զգեստս կանանց և զարանց զգեստ ինչ ագանի կամ կերպարանս ինչ այնպիսի ստացանի նգովեալս լիցի» [6, էջ 195]: Ուշագրավ է՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքից ակնհայտ է դառնում, որ միջնադարյան հանրություն ևս նման արտառոց ու անսովոր դեպքեր եղել են, այլապես ավելորդ կլինեին «Վասն հանդերձի» հոդվածի հետևյալ կետը. «մի եղիցի հանդերձ առնացի զկանամբք կամ զգեցի այր զգեստ կանացի» [8, էջ 388]: Կամ՝ «...կարգելու կանանց և զինուրիլ, հնձան հարկանիլ, նստել շուկայի մեջ, դատաստան տեսնիլ...» [7, էջ 137]: Արգելելու փաստն արդեն վկայում է տվյալ հասարակության մեջ տարբեր ժամանակներում նման դեպքերի, պատումների, թեկուզ սակավաթիվ, առկայության մասին:

«Մասնա ծոեր» ժողովրդական էպոսում կերպավորման արտահայտչականության խնդիրներ լուծելու համար կարևորվել է հերոսների արտաքին տեսքի պատկերումը: Այսպես՝ Խանդութ խաթունը ռազմիկ կին է, նա էլ է զենքեր կրում՝ նիզակ, գուրգ, գրահ և կովում տղամարդկանցից ոչ պակաս [4, էջ 175]: Էպոսի հետևյալ դրվագները ցույց են տալիս հագուստի փոխառման որոշ դեպքեր [3, էջ 432]:

Ճյուղ երրորդ՝ «Մասունցի Դավիթ»

Էն օր իրիկուն Դավիթ չէկավ Խանդութի մոտ:

Խանդութ գիտցավ, որ Դավիթ սպաներ են,

Կսկծուց իր սիրտ վառվավ:

Լուսուն էլավ, *մարդանակ շորեր հագավ,*

Նիզակ առավ, ձին հեծավ, ասաց.

-Էրթամ Դավթի մարմին ջոկեմ, բերեմ, թաղեմ: /էջ 373/

Էլնենք մեյդան, կովե՛նք:

Էն էլ ասաց.-Մեկ ժամ ժամանակ տու,

Զիմ շորեր հագնեմ, զենքեր կապեմ, գամ: /էջ 385/

(Զմշկիկ Սուլթանի՝ Դավթի հետ խոսակցությունից է հատվածը)

Ճյուղ երկրորդ՝ «Մեծ Մեեր»

Դեղձուն Ճուղ-Ծամ հեծավ Քուռկիկ Ջալալուն,

Գնաց սարեր ֆրռա,

Չունքի շատո՛ւնց էր, որ դուրս չէր էլե տնեն:

Մարդ տի էն գախ թամաշ աներ զինք ու իր ձին:

Սաղափե Թամք դրե ձիու վերան,

Պողպատե Սանձ դրե ձիու բերան,
Հագե էրկաթե զրահ, պողպատե սոլ,
Բռնե ի ձեռ Սանասարի թոփուզ,
Կախլան էլ կապեր էր քամակ: /Էջ 167/

Ճյուղ չորրորդ՝ «Փոքր Միեր»

Գոհար տեսավ, սիրտ ցավեց, ասաց.
«Չըլնի՝ արև զարնի Միերին»:
Էլավ, հեծավ խարտեշ ձի մի,
Հագավ կարմիր շորեր,
Ջենք կապեց վեր իրեն,
Էկավ դեմ ի Միեր: /Էջ 403/
Լուս որ բացվավ, Գոհար հագավ սև շոր,
Ջենքեր կապեց վեր իրեն
Էլավ եկավ դեհ Միեր: /Էջ 404/

Չնայած եկեղեցական կանոնի հարուցած արգելքին՝ հայոց սովորության կանխ-վունքը թույլ էր տալիս խախտել այն կյանքի ծայրահեղ պայմաններում, հանուն հասարակության բարօրության, ինչպես նաև երաշտի դեպքում, երբ կանայք, անձրև առաջացնելու ակնկալիքով, տղամարդու շորեր հագած և գլխարկ ծածկած լծվում էին արո-րին՝ չորացած գետի հունը հակառակ ուղությամբ վարելու:

Հայկական մշակույթում կինը կերպարանափոխվել է՝ հագնելով տղամարդու շորեր ծիսական արարողությունների ժամանակ և համայնքի կյանքին սպառնացող իրավիճակում: Կերպարանափոխում կարող էր տեղի ունենալ նաև թատերայնացված գործողությունների ժամանակ:

Ուշագրավ է Ա. Ահարոնյանի հիշողությունն այն մասին, որ ծանր ծնունդի ժամանակ տատները մոր գլխին տղամարդու գդակ է դրել և երկաթե շիշը ձեռքը տալով ստիպել է պտույտներ գործել թոնրի շուրջը: Նպատակը կնոջը տղամարդ ներկայացնելով՝ չարի ուշադրությունը շեղելն ու չարին մոլորեցնելն էր [1, էջեր 11-12]:

Կին թե աղջիկ, հնագանդելով հասարակական կարծիքի պահանջներին, քննադատվելուց և ծաղրվելուց խուսափելու համար ամոթից անում էին այն, ինչ «պահանջում էր աղաթը», որն ուղղակիորեն նպաստում էր տարազի ավանդական կառուցվածքի և ձևերի կայունացմանը: Այս ամենով հանդերձ՝ ավանդական պահպանողական հասարակությունում եղել են ընդունված նորմերի շրջանցման եզակի դեպքեր, որոնք հենց ցույց են տալիս ընդունված նորմերի նշանակությունը: Այս առումով ուշագրավ է Ս. Զելինսկու այն հաղորդումը, թե 1890-ական թթ. Շիրակում հանդիպել է մի քանի կանանց՝ տղամարդու հագուստով [13, էջ 5]: Առանձնակի հիշատակել է մի երիտասարդ աղջկա, ներկայիս Անիի շրջանի Բագրավան գյուղից, ով շրջել է տղամարդու առօրյա հագուստով, օգնել հորը երկրագործական աշխատանքների ժամանակ, ավելին՝ հաճախ սայլով աղի է գնացել: Ախալքալաքի Սուլդա գյուղում ևս նման նյութ է գրանցվել 1980-ական թվականներին, ըստ որի՝ տղա երեխա չունենալու պատճառով իրենց աղջիկներին տղայի շորեր են հագցրել և հոտաղ դարձրել [9, էջ 122]:

Թեև երևույթը Ս. Ջելենսկու կողմից չի գնահատվել, սակայն առկա ազգագրական գրավոր և բանավոր նյութերը թույլ են տալիս ենթադրել, որ նման «ազատագրված»՝ էմանսիպացված կանանց, աղջիկների դեպքերը բացառիկ են եղել: Միայն որոշակի դեպքերում էր համայնքը հանդուրժում նման երևույթները և փաստերի իրական առկայությունն ամենօրյա կյանքում: Սրանք եզակի դեպքեր են, որոնք ցույց են տալիս ընդունված նորմերի նշանակությունը: Հետևաբար միայն լիմինալ/ձգնաժամային իրավիճակներում համայնքը կթույլատրեր շեղում ընդհանուր և կանոնակարգված դրվածքից, տվյալ դեպքում՝ այդ սեռին հատուկ տարազի կենցաղավարվող համալիրից:

Կանայք տղամարդկային հագուստ կամ հագուստի ատրիբուտ օգտագործել են նաև համայնքի համար վտանգավոր, ձգնաժամային պայմաններում. օրինակ՝ պատերազմների ժամանակ, ռազմի դաշտում: Առօրյայում, երբ կինը ստիպված էր որևէ կենդանի, հավ կամ աքաղաղ մորթել, նա ոտքերի արանքում շերտի է պահել, փորձելով տղամարդու կերպարին մոտենալ, քանի որ սովորության իրավունքով նա մորթ անելու իրավունք չուներ: Դա բացատրվում էր նրանով, որ ինքը՝ որպես իգական սեռի ներկայացուցիչ, կյանքի կրողն էր և իրավունք չուներ կյանքից զրկելու այլ էակի:

Ըստ Վ. Իվանովի՝ «հագուստի փոխանակումը կնոջ և տղամարդու տեղի, դիրքի և սկզբունքների փոխանակությունն է» [12, cc. 108-110]: Որոշ էթնոսների մշակույթում այրական զգեստ հագնելու դեպքեր հանդիպել են և թույլատրվել, «երբ ցեղին վտանգ է սպառնացել» [12, c.110], այսինքն՝ միմիայն ծայրահեղ պայմաններում, լիմինալ իրավիճակներում:

Մեր կողմից քննվող դեպքը և տղամարդու շորեր հագնելու երևույթը թերևս կարելի է բացատրել նրանով, որ տվյալ աղջկա հայրն արու զավակ չի ունեցել, ուստի և հայրիշխանական, այրական կողմնորոշմամբ հասարակությունում համայնքը չի քննադատել և վերապահությամբ է նայել աղջկա՝ տղամարդկային կերպարով հանդես գալու փաստին: Գուցե նաև դա պայմանավորված է եղել աղջկա՝ ենթագիտակցական տղա լինելու բնագոյային մղմամբ և տղայական հակվածությամբ, որոնց անվանել և անվանում են օտար տերմինով՝ «ղըզօղլան-աղջիկ-տղա»: Միայն որոշակի իրավիճակներում և դեպքերում ավանդապահ համայնքը կթույլատրեր շեղում ընդհանուր կանոնակարգված դրվածքից:

Հայկական մշակույթում կինը կերպարանափոխվել է, հագնելով տղամարդու շորեր, միմիայն ծիսական արարողությունների կամ ողջ համայնքի կյանքին սպառնացող իրավիճակում: Օրինակ՝ երաշտի ժամանակ անձրևաբեր նպատակով գետի չորացած հունը արորներով հակառակ ուղղությամբ տղամարդու շորերով և գլխարկ հագած վարելիս: Կերպարանափոխում կարող էր տեղի ունենալ նաև թատերայնացված գործողությունների ժամանակ կամ ծպտման և քողարկվելու նպատակով [2, էջ 262]: Երաշտի ժամանակ մի խումբ կանանց լծվելը արորին և չորացած գետի հունը վարելը, այդ նպատակով կին մաճկալին տղամարդու շորեր հագցնելը, ծիսական վարի մեջ մաճկալի արական հագուստը խորհրդանշում էին վարուցանքի մասնակիցների դերերի փոխակերպումները և անցումների ընթացքը [2, էջեր 467-469]: Ըստ Վ. Բոդյանի՝ այդ գործընթացը միաժամանակ մայրիշխանությունից հայրիշխանության անցնելու նշանն էր:

Մայր մաճկալը իր հին իրավունքներով ու հմայական գործողություններով փրկում էր համայնքը այն վտանգից, որ սպառնում էին բնության ուժերը և ժողովրդական պատկերացումներում նա այն ուժն էր, որը՝ որպես կին-մայր, ընդունակ էր մեղմացնելու անձրևաբեր աստվածության ցասումը: Երաշտի ժամանակ երգել են.

Եղիբ մեզի մայրացու,
Մեր արտերը թացացու,
Հաց տուր, մեզի կշտացու,
Ստեղծածիդ մի՛ լացու:

Մի կարևոր հանգամանք է. ծեր կամ ինչպես ժողովրդի մեջ էին ասում «պառավ» կանանց դերը մեծ է եղել ծեսերի, արարողությունների ժամանակ, որպես Մեծ մոր կերպարի հեռավոր արտահայտություն: Ի դեպ՝ նա մի դիտարկում. ավանդական հասարակությունում 50 և ավելի տարեկան կանանց տարեց, նույնիսկ ծեր են համարել, հիմա տարիքային խմբերի սահմանները բավականին փոխվել են:

Բարեկենդանի օրերին, բացի իսկական հարսանիքներից, աղջիկներն ու տղաները առանձին ընդունել են որոշակի կերպարներ ու խաղացել, ըստ որում տղաների մոտ կանանց դերը խաղացել են տղաները, աղջիկների մոտ տղաների դերը կատարել են աղջիկները [5, էջ160]: Ուշագրավ է, որ երկսեռ լինելու դեպքում սեռը փոխած կնոջը կոչել են տրանսվեստիկ, իսկ երևույթը՝ էրոտիկ հանդերձավորում, ֆիզիոլոգիական փոփոխությունից բացի շեշտելով նաև հագուստի փոփոխումը [10]:

Ներկայումս, գլոբալիզացիոն, համահարթեցման այս հորձանուտում, նորաձևության նոր միտումներով և թրենդներով պայմանավորված, փոխվել են հագուստը կամ հագուստի տարրերը կանացի կամ տղամարդկային համարելու սահմանները և մոտեցումները: Կանանց, երիտասարդ աղջիկների առավել համարձակ, իրենց նորաձև համարող ներկայացուցիչները դեռևս 1950-1960-ական թվականներից սկսել են կրել տղամարդկային համարվող կոստյում շալվար: Ի դեպ Եվրոպայում առաջին կինը, ով խախտելով թաբուն, հագել է շալվար և ծխախոտ ծխել, հայտնի գրող Ժորժ Սանդն էր, ում անվանում էին «շալվարով տիկին»: Սանդի հեղինակությունը սասանվել է այն բանից հետո, երբ նա սկսել է հասարակության մեջ հայտնվել տղամարդկանց համար նախատեսված հագուստով: Նա գտնում էր, որ այդ հագուստն ավելի ամրակազմ տեսք է հաղորդում կրողին և ավելի էժան է, քան այն հագուստը, որ կրում են ազնվականուհիները: Աղմկահարույց էր նրա ծխախոտ ծխելու հանգամանքը: Նման հագուկապը և պահվածքը անընդունելի էր 19-րդ դարի եվրոպական էթիկետում, և նա հայտնի էր որպես «տաբատ կրող ու ծխամուրճը գրպանում պահող» կին:

ԵԶՐԱՆԱԳՈՒՄ: Հայկական միջավայրում տղամարդկային համարվող կոստյում շալվար հագնելու միտումը առավել ինտենսիվ դարձավ ուշխորհրդային և անկախացման տարիներին: Հիմա հագուստները ունիֆորմ և ունիսեքս են դարձել՝ ընդհանուր երկու սեռի համար: Ավելին՝ երբեմնի ներքնագգեստ շապիկ մայկաները դարձել են ընդհանուր և կիրառելի նաև դրսում՝ երկու սեռերի կողմից էլ:

Նորաձևությունը ավանդական տարազի հակոտնյան է՝ իր որոշակի գծերով ու թրենդներով: Նորաձև հագուստի ամենակարևոր հատկանիշը և միտումը հարափոխու-

թյունն է, ըստ որում նորաձև համարվող հագուստը տարբերվում է տարազից, որին առավելապես հատուկ էր պահպանողականությունը և կայունությունը: Թեև ժամանակի ընթացքում և թելադրանքով նոր տարրեր են հայտնվում նաև ավանդական հագուստի համալիրում՝ հատկապես նորաձևության ազդեցությամբ: Մյուս կարևոր տարրերով հատկանիշը՝ մեծ էր համայնքի թելադրանքը և ներգործությունը տարազի վրա, համայնքն էր թույլատրում՝ ինչ կարելի է և ինչ չի կարելի, իսկ նորաձևությունը կախված է դիզայներների և դերձակների ստեղծագործականությունից և մտահղացումներից: Սակայն երբեմն լինում են դեպքեր, երբ տարազը փոխվում է նորաձևության ազդեցությամբ, իսկ նորաձևությունը փոխվում է նրա ստեղծողների կամքով: Մյուս կողմից՝ մոդան ևս հաշվի է առնում հասարակության պահանջները: Կարող են լինել դեպքեր, երբ դերձակները, հագուստի ձևավորողները, հաշվի չառնելով տվյալ հանրային կոլեկտիվ հայացքները, պատկերացումները և նախընտրությունները, ձևավորում և առաջարկում են հագուստ, որն այդպես էլ քաղաքացիություն չի ստանում [11, cc.299-300]: Հագուստի որոշ տարրեր, ինչպես կրծկալն է, գուլպայի կապիչները, մագերի երկար կամ կարճ սանրվածքը, կանացի կամ տղամարդկային համարվող հագուստների առկայությամբ կամ բացակայությամբ, արտահայտում են նաև կրողների սեռային կողմնորոշումները:

Ներկայումս նկատելի է դառնում, նախկին կանացիության գեղագիտությանը հակառակ, ավելի սեքսուալ, ավելի բաց և թեթև հագուստ (առանց ներքնազգեստի, մարմնի երբեմնի հատուկ քողարկված մասերը չծածկող շորեր) կրելու միտումը:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Ահարոնյան Ա.** *Երկերի ժողովածու*, հ.10: Վենետիկ Ս. Ղազար: 1948: 366 էջ:
2. **Բրդյան Վ.** *Երկրագործական մշակույթը Հայաստանում*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 510 էջ:
3. *Դավիթ Սասունցի, Հայկական ժողովրդական էպոս*, Երևան, «Արևիկ» հրատ., 1988, 432 էջ:
4. **Չաքարյան Ե.**, *Հարդարանքը Սասնա ծռերում*, // *Հայկական Սասնա ծռեր էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը*, Ծաղկաձոր, 2004, 175 էջ:
5. **Խաչատրյան Ժ.** *Ծիսական պարը հայոց հավատալիքների համատեքստում*, Երևան: ՀՀ ԳԱԱ հրատ.: «Գիտություն»: 2014: 374 էջ:
6. *Կանոնագիրք հայոց* (աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի), հ. Ա, Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1964: 195 էջ:
7. **Հացունի Վ.** «Հայուհին պատմության առջև», Վենետիկ – Ս Ղազար: 1936:
8. **Մխիթար Գոշ**, *Դատաստանագիրք, Վաղարշապատ*, 1880, 442 էջ :
9. **Սարգսյան Ա.** Դաշտային ազգագրական նյութեր, *Ջալալիք*: 1982: Տեսք 4: 122 էջ:
10. Der erotische Verkleidungs tribe /Dei Trans vestiten/ von Pr. Magnus Herschfeld und Max Telke, Berlin, - Verlag von Alfred Pulvermache, 1912, N 30, tafel LIV.
11. **Богатырев П.** *Вопросы теории народного искусства*, М., Искусство, 1971, 544 с..
12. **Иванов В.** *Очерки по истории семиотики в СССР*, М., 1976. 298 с.
13. **Зеленский Н.** *Экономический быт государственных крестьян в Шорагяло-Александропольском уезде Эриванской губернии-МЭБЗК*, Тифлис, 1893, 5 с.

References

1. **Aharonyan A.** Collection of works [*Erkeri Jhoghovacu*] no. 10, Venice St. Lazar, 1948, 366 p.. (in Armenian)
2. **Bdoyan V.** Agricultural culture in Armenia [*Erkragorc'akan mshakowyt'y' Hayastanum*], Yerevan, USSR State Press, 1972, 510 p. (in Armenian)
3. Davit Sasuntsi. Armenian folk epic [*Haykakan jhoghovrdakan e'pos*], Yerevan, "Arevik" publishing house, 1988, 432 pages (in Armenian)
4. **Zakaryan E.** Decoration in Sasna trees, [*Hardaranqy' Sasna c'r'erum*]. Armenian Sasna trees epic and world epicheritage, Tsaghkadzor, 2004, 175 p.. (in Armenian)
5. **Khachatryan Zh.** Ritual dance in the context of Armenian beliefs [*C'isakan pary' hayoc havataliqneri hamateqstum*]. Yerevan, RA National Academy of Sciences "Science", 2014, 374 p.. (in Armenian)
6. Rulebook of Armenians. *Kanonagirq hayoc* (with the diligence of V. Hakobyan), vol. A, Yerevan, USSR GA ed. 1964, 195. p. (in Armenian)
7. **Hatsuni V.** "The Armenian woman in front of history". [*Hayuin patmut'ean ar'jew*] Venice - S. Gazar, 1936. 232 p. (in Armenian)
8. **Mkhitar Gosh.** Judgment Book. [*Datastanagirq*]. Vagharshapat, 1880, 442 p.. (in Armenian)
9. **Sargsyan A.** Field ethnographic materials. [*Dashtayin azgagrakan nyut'er*]. Javakhk, 1982, book 4, 122 p.. (in Armenian)
10. Der erotische Verkleidungs tribe /Dei Trans vestiten/ von Pr. Magnus Herschfeld und Max Telke, Berlin, - Verlag von Alfred Pulvermache, 1912, N 30, tafel LIV.
11. **Bogatyrev P.** Questions of the theory of folk art. [*Voprosy teorii narodnogo iskusstva*] .M., Art, 1971. 544 p..(in Russian)
12. **Ivanov V.** Essays on the history of semiotics in the USSR. [*Ocherki po istorii semiotiki v SSSR*]. Moscow. 1976. 108-110 pp..(in Russian)
13. **Zelinsky S.** Economic life of state peasants in Shoragyalo-Aleksandrapolsky district of Erivan province. [*Jekonomicheskij byt gosudarstvennyh krest'jan v Shoragjalo-Aleksandrapol'skom uezde Jerivanskoj guber* MEBK3K, Tiflis, 1893. 5p..(in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **19. 09. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **17. 11. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Սվետլանա Հայկի ՊՈԳՈՍՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, Հայոց ազգագրության թանգարանի գիտ. գծով փոխտնօրեն, ԳԱԱ ՀԱԻ ավագ գիտաշխատող, Երևան, ՀՀ
Էլ. հասցե՝ sv_ethnomuseum@yahoo.com // orcid.org.0009-0001-5774-0486

Svetlana Hayk POGHOSYAN, Ph.D in history, AEM vice director,
senior researcher of IAE NAS, Yerevan, RA
e-mail: sv_ethnomuseum@yahoo.com // orcid.org.0009-0001-5774-0486

Светлана Гайковна ПОГОСЯН: канд.ист.наук, зам. директора по научной части МЭА, старший научный сотрудник ИАЭ НАН, Ереван, РА,
эл. почта: sv_ethnomuseum@yahoo.com // orcid.org.0009-0001-5774-0486